

մէջ՝ որով խորագրերն է «Հայ գիտնականներ... Ժողովրդականներ»։ Ժողովրդականներն ալ հայերէնը չկայ։

Կը բացակայի նաեւ Սարգիսեան Հ. Բարսեղ՝ իր բանասիրական մեծիկ վաստակով։ Հ. Համբ. Ոսկեան։ Հուսիկ կը բացակայի ինք Միւրթար Սերաստացին, որ իր Հայկազեան բազմաթիւ եւ քերականութիւններով՝ մեր վերածնունդի առաջին գիտնականն է։

Հ. Ալիշանի գործերու շարքին՝ մոռցուած է «Սիւտան»ը։

Կը բացակային բժիշկներ, Յարութիւն Թիրեաքեան, Թորգոմեան, Տաղաւարեան, Մեսրոպ Պատ. Նշանեան։

Կը պակսին Գարեգին Պատ. Խաչատուրեան, Օր. Սիրարիկ Տէր Ներսէսեան, Թորոս Ազատեան։

Կը պակսին Դանիակցական նկատուածներ, ինչպէս Ռ. Զարգարեան, Ծ. Միսաքեան. (Գրիգոր Զոհրապ ներս առնուած է)։

Ինծի կարելի չէ ըմբռնել թէ ինչո՞ւ կը թոյլատրուի հրատարակութիւնը նման անծրագիր եւ անկատար գործի մը, երբ երեւանի մէջ կան ամէն միջոցներ՝ ներկայանալի եւ ամբողջական գործ մը հրատարակելու։ Ինչ որ հրատարակուած է իրր կենսագրական նիւթ՝ շատ խելճ խմբագրուած է, մինչ կարելի էր շատ աւելի ամփոփ, մեկին, որոշ տալ այդ կենսագրութիւններուն իւրաքանչիւրը։ Վերջապէս չի բաւեր ըստ կարելւոյն նիւթ հաւաքել ու խառնափնթոր հրատարակել, ինչ որ կատարուած է ներկայ այս գործին մէջ, որ ինչպէս ըսի՝ ՀԱՍ ԿԱՄՍ կադմուած է։

Խժալուր եւ անհարազատ օտար բառեր

բով լեցուն այս աշխատութիւնը՝ փոխանակ իր խորագրին տուրք տալու, ջանադած է աւելի պարտիական բան մը ըլլալ, այսպէս Հայագիտութիւն՝ իր խորագրին եւ թէ՛ իր նպատակին մէջ։



RUGS OF ARMENIA: Գրեց Յարութիւն Ռաֆայէլեան։ Քառաձալ, լաքակազմ, նկարազարդ, էջ 88: Նիւ Եոթ, 1960: Գին 5 տոլար։

Պր. Յարութիւն Ռաֆայէլեան ծանոթութեանց պատմութիւններու խճանկար մը ուղեր է կազմել Հայկական գորգարուեստի մասին։ Աշխատանքը գիտական տարազ մը չունի եւ հեղինակը աւելի տարուած հայրենասիրութենէ՝ ցանկացեր է ազգակիցներուն արժէքաւոր բաժին մը հանել գորգարուեստին մէջ։

Կան մանր սխալներ, որոնք սակայն գործին ներկայ վիճակին մէջ մեծ նշանակութիւն մը չեն ներկայացներ։ Էջ 50ի վրայ դրուածը՝ էջ 51ի վարի գորգին ներկարին մասին, բոլորովին սխալ է. ո՛չ գորգը ու ո՛չ ալ իր յիշատակարանը կապ մը ունին Ստեփանոս Աղաւնիի հետ։ Էջ 55ի նկարը ոչ մէկ կապ ունի Մէմլիկի կողմէ գծուած Աստուածամօր ոտքերուն տակ սփռուած գորգին գծաձեւին հետ։

Աշխատութիւնը իր ոչ յոյնացուցիչ ու ժողովրդական ըմբռնելի ձեւով, եւ մանաւանդ անդլիւրէն լեզուով, տարակոյս չկայ որ օգտակար կընայ ըլլալ՝ երբ ծաւալի տեղական զարոյցներու, ինչպէս նաեւ հասարակաց մատենադարաններուն մէջ։

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆՔ

ՀՍՍՌ ՊԵՏ. ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

ԱՆՆԵԱՆ ՎԱՍԹԱՆԳ. - Հայաստանի կենդանական աշխարհը։ Հնագոյն ժամանակներից մինչև մեր օրերը։ Հատոր Ա. Կաթնասուններ։ Երեւան, Հայպետհրատ, 1961 էջ, 433 (մեծագիր)։ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ ՍԵՒԱԿ. - Վասան Թոթովեցի։ Երեւան, Հայպետհրատ, 1961 էջ 309։ ԲԵՃԱՆԵԱՆ Ա. ԱՐԱՄՈՒՀԻ. - Ալեքսանդր Ծաւուրեան։ Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1960, էջ 182 (փոքրագիր)։ ԳԱՊԱՐԵԱՆ ԳԱՊԱՐ Ն. - Ժամանակակիցները Կոմիտասի մասին։ Երեւան, Հայպետհրատ, 1960, էջ 339։ ԴԱՆԻԷԼ ԿԱՐԷՆ Ա. - Հայ մեծաւորային զբաղմունքեան պատմութիւնը։ Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1961, էջ 228։ ԴԱՏՏԵՆՅԱՆ ԽԱՉԻԿ. - Խոզեան (Բ. տպ.)։ Երեւան, Հայպետհրատ, 1960, էջ 583։ ԴԱՄԱՐԵԱՆ ՌՈՒԲԷՆ Գ. - Մարտիրոս Սարեան։ Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1960, էջ 158 (մեծագիր)։ ԴԵՐ. - Սիրանոյշ։ Երեւան, ՀԱՏԻԿԵԱՆ ՍԱՄՈՒԷԼ. - 1961, էջ 187։ Հայպետհրատ, 1961, էջ 187։ ԹԱԴԵՆՈՍԵԱՆ ԱԼ. - Ժամանակակիցները Ա. Սպեղարեանի մասին։ Երեւան, Հայպետհրատ, 1960, էջ 162։ ԹԱՄԱՆԵԱՆ ԱԼԵԿՍԱՆԴՐ. - Յօդուածներ, փառաբանութիւն, Ժամանակակիցները նրա մասին տարբեր, Ժամանակակիցները (Կազմեց եւ ծանոթագրեց Լեւոն Զօրեան)։ Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1960, էջ 285։ ԿԱՄԱՐԻ ՅԱԿՈԲ. - Յուշարձան։ Երեւան, Հայպետհրատ, 1960, էջ 175 (փոքրագիր)։ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ ՍԻԼՎԱ. - Մտորումներ ճանաչողութեան կէտին։ Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 119 (փոքրագիր)։ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. - Պրեկիւդիաներ. փեւտովայական-զբաղմունքային ուսումնասիրութիւններ։ Երեւան, Հայպետհրատ, 1960, էջ 645։ ՀԱՃԵԱՆ ՎԱՀՐԱՄ. - Ալ պանդուխտ չեմ։ Երեւան, Հայպետհրատ, 1960, էջ 190 (փոքրագիր)։ ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄԵԱՆ ՎԻԿՏՈՐ. - Գիտութիւնը Հայաստանում 40 տարում։ Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1960, էջ 74։ ԳԱՁԱՐԵԱՆ ՍԵՐՈԲ. - Միջին Հայերէն. գիրք Ա. Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1960, էջ 303։ ԴԱՄԱՐԵԱՆ ՅՈՒՆԵՍԿՈՒՆ. - Արտասահմանական զբաղմունքեան պատմութիւն։ Վերածնունդի շրջան (Բ. տպ.)։ Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 806։

ՄԵԼԻԲՈՒԹԵԱՆ ՍԱՐԳԻՍ. - Ուրուագիծ Սովետահայ Թատրոնի պատմութեան։ Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1960, էջ 265 ու բազմաթիւ պատկերներ։ ՄԵԼԻԲՈՒԹԵԱՆ Վ. Գ. - Զէյթունի հերոսամարտեր։ Երեւան, Հայպետհրատ, 1960, էջ 116։ ՄԿՐՏՁԵԱՆ ՄԱՆԻԿ. - Հայ ժողովրդական պանդուխտեան երգեր։ Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1961, էջ 323։ ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ ՍՏԵՓԱՆ. - Հայկական ճարտարապետութեան Սիւնիքի զարոյցը։ Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1960, էջ 266։ ՅԱԿՈԲԵԱՆ Թ. Խ. - Ուրուագիծը Հայաստանի պատմական աշխարհագրութեան։ Երեւան, Հրատ. 1960, էջ 480։ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՎԱՀԱՆ. - Վարդգէս Սուրէնեանց։ Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1960, էջ 139 ու բազմաթիւ պատկերներ։ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ՀՐԱՅՐ. - Մեր թատրոնները։ Երեւան, Հայպետհրատ, 1960, էջ 159 (փոքրագիր)։ ՅՈՎԱՆ ԳՈՒՐԳԷՆ. - Ռուս-հայ գրական կապերը ժողովրդական։ Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1960, էջ 517։ ՊԵՇԻԿՅԱՆ ՄԿՐՏԻՉ. - Տաղեր (Կազմեց եւ խմբագրեց Ժիրայր Աւետիսեան)։ Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 199 (փոքրագիր)։ ՊԵՏՐՈՍԵԱՆ Ե. - Հայ գրականութիւն. ակնարկներ։ Երեւան, Հայպետհրատ, 1960, էջ 293։ ՊՅՈՍԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. - Սոցիալ-տնտեսական յարաբերութիւնները Կարսի մարզում. 1878-1920։ Երեւան, Հայպետհրատ, 1961 էջ 380։ ՍԱԳՍԵԱՆ ԼԵՒՈՆ. - Դրամատիկական երկեր։ Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 181։ ՍԱՐԳՍԵԱՆ ԽՈՐԷՆ. - Ստեփան Զօրեան։ Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1960, էջ 326։ ՍԱՐԳՍԵԱՆ ՄԻՆԱՍ. - Սովետական Հայաստանի գրաֆիկան։ Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 183 (մեծագիր)։ ՍԱՐՄԷՆ. - Բանաստեղծի աղբիւր։ Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ Ը+511։ ՍԱՐԵԱՆ ԳԵՂԱՄ. - Երկերի ժողովածու։ Հատոր Ա. Բանաստեղծութիւններ։ Հատոր Բ. Բալլադներ, Պոէմներ։ Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 406, 469։ ՕՂԱՆԵԱՆ ԱՐԱՄ. - Արեւելահայ տնտեսագիտական մտքի պատմութիւնը։ Երեւան, Հրատ. 1960, էջ 179։

